

21661

21662

21663

891.99.092

G-79

ԿԱՍԹՕՆ ՊԵՐՃԸՐԵ

ԵՐԶԱՆԻԿ ՄԱՐԴ ՄԸ

ԹԱՐԳՄԱՆԵԱՅ Ի ԳԱՂՂԻԱՐԵՆ:

ԳԱԲՐԻԵԼ ԳՐԱՍԿՐԵԱՆ

معارف عويمه نظارت جليل سنك رخصنيه طبع اوتشدر

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔԻ

1886

34

4726

## ԵՐԶԱՆԻԿ ՄԱՐԴ ՄԸ

Ա.

Լուվոի քարատափին վրայ հսկող խաղաղութեան պահապանը Սէն գետին ափանց վրայ՝ Որհետից եւ Քարուգելի կամրջոց մէջ տեղը մարդոց բազմութիւն մը նշմարեցին։ Թէպէտ եւ շատոնց լաւցած՝ սակայն դեռ առաւօտ էր։ Յուլիսի մէջ արեւը Փարիզցիներէն՝ առաջ կ'ելնէ։ Ուրեմն արտաքոյ կարգի դէպք մը պէտք էր, որ այդպիսի ընդհանրապէս ամայի տեղ մը ժողովէր այդչ չափ բազմութիւն այդչափի կանուխ ժամանակ։ Բազմութեան վրայ ո՛չ աղմուկ, ո՛չ անհանգստութիւն եւ ո՛չ ալ չփոթութիւն կ'երեւէր։ Ըսել է որ մի միայն հետաքըրբրութեամբ ժողովուած էր հոն։ Այսու հանդերձ հասարակաց խաղաղութեան պաշտօնէից պարտըն էր երթալ այն տեղ։ Թէպէտ եւ հոն այն միջոցին ընելիք բան մը չունէին, սակայն դետափանց վրայ պատահած դէպքերն շատ անդամ պատճառ

628  
40

կուտան վարձատրութեանց . հետեւապէտ դժուարութիւն մը չունեցան հոն խռնող քանի մը հետաքրքիրները հեռացնելու , եւ անակընկալ տեսարան մը բացուեցաւ առջեւնին :

Մարդ մը փոռուած էր գետինն, անշարժ, աչքերը գոցած, բոլորովին մերկ վիճակի մէջ :

— Մեռե՞ր է, հարցուց պահապաններէն մին :

— Ո՛չ, պատասխանեց ներկայից մին կամաց ձայնով մը, կը ննջէ :

Արդարեւ այս մարդուս դիրքը բնական էր . իւր գիմաց գիծերը քնաւ վիշտ մը չէին յայտներ . մինչեւ անդամ կը նշմարուէր շընչառութեան շարժումը՝ որով կանոնաւորապէս վեր կ'ելնէր կուրծքը միջոց միջոց :

— Ո՞ւր են իւր զգեստները, հարցուց միւս պահապան՝ աչքերը պտըտցնելով շընչակայից վրայ :

— Ո՛հ, ի'նչպէս գեղեցիկ է, ըստ բարի, հերարձակ, կարճ շապիկ հագած կին մը . եւ այս դիտողութիւնս ըրաւ առանց շարամտութեան, միայն իւր արուեստական զգացումնը յայտնելու համար :

Ստուգապէս գեղեցիկ մարդ մըն էր այս . դեռ սեւագոյն մազերով շրջապատեալ եւ խնամօք կտրուած բարակ մօրուքով գեղե-

ցիկ գլուխ մ'ունէր : Ոտքերն ու ձեռքերն շատ վայելուչ էին, ակադի նման վարդագոյն եղունգներով, եւ որ ամենէն հազուագիւտն է քաղաքակրթեալ մարդոց մէջ, բազկաց եւ ազգերաց մէջ ճիշդ համեմատութիւն մ'ունէր : Վերջապէս մարմնոյն սպիտակութիւնը ցոյց կուտար թէ այս մարդս սպորութիւն չունէր այսպէս օդոց անբարեխառնութեան ենթարկուելու :

— Ե՛լ նայինք, դոչեց վայրագաբար պաշտօնէից մին՝ ննջողին թեւը ցնցելով :

Մարդն արթնցաւ : Աչքերը բանալով բընաւ զարմացում մը չյայտնեց ա'յնչափ մարդոց մէջ տեղը գտնելով զինքը, եւ բնաւ ըըշիղթեցաւ գտնուած վիճակին վրայ : Կամաց մը մատներն աչքերուն վրայ պարտցուց . յօրանջելու փափաքը զսպեց, ելաւ նստաւ, եւ շատ բնական ձայնով մը հարցուց :

— Ի՞նչ կայ :

— Ի՞նչ կայ մի, բեզի հարցնելու է . ի՞նչ կընես հոգ :

— Կը ննջէի :

— Ա՛յս վիճակիս մէջ այս տեղ չեն քնանար . ո՞ւր են զգեստներդ :

— Չունիմ :

— Կողուղաղեցի՞ն զըեղ :

— Ես մարդու համար ամբաստանութիւն

չեմ ըներ . պարզապէս կ'ըսեմ թէ զգեստ չունիմ :

— Այդ կ'երեւի կոր . բայց ի՞նչ ըրիր զգեստներդ :

Այս հարցաքննեալ մարդս շատաբան չէր իրեն այնպէս թուեցաւ թէ արդէն շատ խօսած էր . և զի՞նքը շրջապատող բազմութեան վրայ անտարբեր հայեցուածք մը դարձնելով բնաւ պատասխան մը չտուաւ այնուհետեւ :

— Լա՛ւ , երթանք , ըսաւ պահապանք . պաշտօնատեղին երթաս նէ հոն կը պատասխանես :

Այսպէս ըսելով կը պատրաստուէր մարդն ոտքի հանելու եւ մէկ թեւէն բանելու , մինչդեռ իւր ընկերն ալ միւս թեւէն պիտի բռնէր , երբ նշմարեց որ անկարելի էր Փարիզու փողոցներուն մէջէն տանիլ այսալիսի մէկ մարդ մը :

Քարատափին վրայ արդէն խռնեալ հետաքրքիրք՝ որոնց թիւը վայրկենէ վայրկեան կ'աւելնար , անշուշտ չպիտի վրիպէին անոր ուղեկցելէ . փողոցներուն մէջ պատահող բոլոր անցաւորք՝ յորս առաւօտեան կեանքը կ'սկսէր զարթնուլ , այս ուղեկցութեան պիտի միանային , եւ տասն հազար հոգիի չափ պիտի գային խոնէին պաշտօնատեղւոյն առաջ . և այնուհետեւ շրջադայութիւնը

հաստատել շատ դժուարին պիտի ըլլար : Երկու պահապանները խորհրդակցութեան նստան . եւ արագ արագ խօսակցութենէ մը ետքը՝ ասոնցմէ մին զատուեցաւ միւսէն , երթալու ոստիկանատունն եւ հրահանգ խնդրելու , մինչդեռ միւսը պահպանութիւն կ'ընէր վերոյիշեալ մարդուն քով , որպէս զի չըլլայ թէ փախչի եւ գայթակութիւն պատճառէ ժողովրդեան : Բայց որովհետեւ մինակ էր եւ չէր ուզեր հեռանալ իւր բանտարկեալէն , ո'րչափ որ ալ պարզամիտ ժողովուրդը ցրուելու յորդորեց , բնաւ մտիկ ընող չեղաւ : Ասկից զատ , կուզրի կամ անոր դիմացի Մալաքէ քարավին կամ Արհեստից կամ Քարուզէի կամքընոց վրայէն անցնող բոլոր մարդիկ , գետափին վրայ տեսնելով այս անսովոր բազմութիւնը , կուգային հասկնալու եղելութիւնը եւ հոն կը մնային :

Այնպէս որ մէկ քանի վայրկենի մէջ գետափինը լցուեցաւ հոծ եւ խիտ բազմութեամբ եւ ամէնքը մէկ մէկ կերպ մեկնութիւն կուտային եղելութեան :

Բանտարկելոյն մօտ եղողները տեսնելով մերկ մարդ մը ոստիկանութեան պաշտօնէի մը պահպանութեանը տակ , բնականաբար վարչական բռնապետութեան այս զոհին կողմը բռնեցին , ոմանք ալ ջանացին հետը խօսիլ :

Հարցուցին իրեն թէ անօթի՞ էր : Պատասխանեց թէ առջի իրիկուընէ ի վեր բան դրած չէր բերանը . ասի վշտացուցիչ բան մը չէր, որովհետեւ գեւ քանի մը ժամէ ի վեր էր որ առաւօտ եղած էր . բայց մարդոց կարելցութիւնը շարժեցաւ, եւ լուր տարածուեցաւ թէ այս մարդս անօթութենէն եղեր էր այսպէս, եւ ամէն կողմէ բերին անոր հաց, արգանակ, միս եւ գինի : Խաղաղութեան պահապանը անկտրող էր իւր բանտարկեալը պահպանելու այնչափ համակրութեանց դէմ . եւ չէր ուզեր ալ ունայն տեղ անդութ երեւիլ . ուստի բանտարկեալը նախաճաշն ըրաւ լաւ ախորժակով, մինչդեռ ուրիշ գթասկրտ անձինք ստակ հաւաքելու կ'ելնէն փեղոյր մը պըտցնելով ի նպաստ այս մարդուս :

— Կ'երեւի թէ վտանգաւոր չարագործ մըն է, կ'ըսէին ոմանք :

— Բնա՛ւ, կը պատասխանէին այլք, ընկըլմեալ մէկն է :

— Ուրեմն ինչու համար բռներ են :

— Որովհետեւ այս տեղ ընկըլմիլ արգիւեալ է, կ'ըսէր որիկային մէկը :

— Զգեստները հանելնին պակասութիւն մը, անիրաւութիւն մըն է :

— Ոստիկանութիւնն անիրաւութենէ զատ ուրիշ ի՞նչ կ'ընէ :

Վերջապէս միւս պահապանն ոստիկանառունէն վերադարձաւ ուրիշ պահապաններով եւ պատգարակաւ մը : Մարդը պառկեցուցին պատգարակին մէջ, հանգանակութեան գումարն ընդունելէն վերջը՝ զոր պահեց ձեռքին մէջ՝ գրպան չունենալուն համար . կտաւները լաւ մը գոցեցին, եւ ձանրայ ելան ոստիկանատունն երթալու համար : Քանի մը ժամ վերջը՝ կարգն ու կանոնաւորութիւնը հաստատուած էր . բայց խումբ խումբ մարդիկ դեռ կեցան գետափանց վրայ մինչեւ որ արեւը մարը մտաւ, մտածելով որ՝ որովհետեւ կ'սպասէին, բան մը պիտի պատահէր :

Ոստիկանութեան պաշտօնեայն՝ երբ մարդն իրեն տարին, նախ եւ առաջ անոր անունն հարցուց :

— Ես անուն չունիմ :

— Ո՛չ, չէք ուզեր ինքինընիդ ձանչցընել . այս ծանօթ դրութիւն մի է . սակայն շատ անդամ չյաջողիր : Ուր կը բնակիք :

— Բնակարան չունիմ :

— Բնականաբար : Ասի ձեր առաջին պատասխանին հետեւութիւնն է : Խսկ եթէ ձեզի հարցնեմ ուրկից կուգաք, ինձի պիտի պատասխանէք, եւ ո՛չ մէկ տեղէ մը :

— Այո :

— Շատ աղէկ : Ես հիմակ զձեղ Տէրո

պիտի խրկեմ. բայց չեմ կրնար զձեզ խըրկել այս վիճակին մէջ։ Քիչ մը խօսինք հետերնիդ։

Եւ հրաման պիտի տայր որ այս ձերբակալեալ մարդուն հետ միայնակ թողուն զինքը, բայց միտքը փոխեց։ Խայտառակ եւ ծաղրական երեւցաւ իրեն խօսակցութեան մկիլ մերկ մարդու մը հետ։ մարդ խրկեց իւր տունը որ մէկ հին բաննացն եւ հին ունիք մը բերեն։ Ասի արտաքոյ կարգի բան մըն էր։ ոստիկանութեան պաշտօնեայ մը անշուշտ չէր կրնար իւր ծախիւքը հոգալ այս կերպով ձերբակալեալ մարդոց հանդերձները։ Բայց մտածեց որ այս բացառիկ դէպք մըն էր, եւ անշուշտ ամէն ատեն պատահելիք բան մը չէր, որով այս սկըզբունքիս կապուելու պարտաւորէր։ Հիմակ խնդիրը մնաց գիտնալու թէ արդեօք այս մարդս պիտի հաւանէ՞ր կամովին հագնելու իրեն ընծայուած զգեստները։ Բարեբաղդաբար բնաւ դժուարութիւն չըրաւ։

Խաղաղութեան պաշտօնէից գնդապետը դիտողութիւն ըրաւ որ, եթէ ոստիկանութեան պաշտօնեայն նոյն գդեստներ տալու բարութիւնը չունենար, կարելի էր զանի հագուեցնելիւր ծախիւքը։ — Դրամ ունի, ըսաւ։

Արդարեւ, մարդը ձեռքը բացաւ։ մէջը

կար 87 Փրանք 50 սանթիմ, որ հաւաքուածէր հանգանակութեամբ։

— Կրնաք զայդ պահել, ըսաւ պաշտօնեայն. դրէ՛ք գրպանս։

Յետոյ դուրս հանել տուաւ զամէնքը, նստեցուց մարզը, եւ անոր ըսաւ սիրավիրեղանակաւ։

— Զեմ հասկնար թէ ո՞րպիսի կատակ է այս։ Դուք չնորհքով մարդ մը կը նմանիք։ մաքուր էք։ լաւ կը խօսիք։ լաւ ձեւեր ունիք։ չարագործի մը տպաւորութիւնը չունիք, եւ ես չեմ ուզեր պահել զձեզ։ Բայց սակայն պէտք է որ իրաւանց երեւոյթ մը տաք ինձ, որպէս զի ազատ թողում զձեզ։ Ըրած բաներնիդ բացարձակապէս անսովոր բան մըն է։ դուք պատճառ տուիք ա'յնշափ մեծ բազմութեան մը ժողվուելուն, եւ ընդունելի եւ ներելի չէ, որ ցերեկ ատեն, Փարիզու մէջ տեղը, մարդ երեւի ա'յն վիճակին մէջ՝ յորում դուք գտնուեցայք։ Ասոր ի՞նչ նպատակի համար ըլլալն աղէկ կ'ըլլայ որ ինձի ըսէք։ մենք վայրենիներ չենք, եւ ես չեմ ուզեր այս գործին տալ պէտք եղածէն աւելի կարեւորութիւն։ Բայց ի՞նչ բան եղաւ ձեր շարժառութը։ Արգեօք Աէնի մէջ լուացուելո՞ւ գացիք։ Ասի արգիլեալ է, բայց վերջապէս . . . պարտազանցութեան պատժով մը կ'ազատիք։ Արդեօք ձեր ջոււ-

րին մէջ եղած ատե՞ն առին տարին համարձնիդ : Ո՞ւ : Անանկ է նէ գրաւի մը համար ըրիք այս բանս : Արդեօք գիշերը քիչ մը աւելի զուարթութեամբ ընթրեցիք : Կը տեսնէ՞ր, որ ես ինքնս բացատրութիւն մը տալու միջոցները կը փնտուեմ : Բայց եթէ բնաւ խօսիլ չէք ուզեր . . .

— Եատ երախտագէտ եմ ձեզ, պարո՞ն պաշտօնեայ, ձեր առ իս յայտնած բարեսրտութեան համար : Դուք ինձի զգեստ տուիք, ստակս ինձի թողուցիք, զիս ձանձրոյթէ ազատելու փափաքով կը հարցաքննէք զիս, ձեր այս բարի փարմունքին համար շատ չնորհակալ եմ : Ես կ'ուզէի պատասխանել այս ամէնուն՝ ձեզ տալով այն բացատրութիւնները զրոս կը փափաքիք ունենալ, բայց բոլորովին անկարելի բան մըն է այս ինձի : Ես որոշած եմ բան մը չըսել եւ կրել եւ հանդուրժել այս վիճակիս պատճառելիք ամէն հետեւութեանց : Եթէ պիտի խօսիմ բացուելիք հարցաքննութեանց ժամանակ, այս ալ պիտի ըլլայ մի միայն ձեր ազնիւ դիտաւորութեան եւ ձեր կատարեալ բաղաքավարութեան յարգանքս եւ մեծարանքս մատուցանելու համար :

— Կը ցաւիմ, պարո՞ն, այժմ ինձ կը մընայ Ատեանին հաղորդել ձեր ձերբակալութեան ատենագրութիւնն եւ խրկել զձեզ ոստիկանութեան դուռը :

Քոան եւ չորս ժամու մէջ ոստիկանութեան հարցաքննիչներէն մին հարցաքննեց այս մարդս . եւ նա' նորոգեց իւր յայտնութիւնը, բնաւ ո՛ր եւ է հարցման պատասխանել չէր ուզեր : Փոխանորդն այն ատեն առաջին դժուարութեան մը հանդիպեցաւ . վասն զի մարդ մը բանտի մէջ պահելու համար, պէտք է անոր անունն արձանագրել, եւ արձանագրութիւնը պէտք է որոշ ըլլայ : Եատ անդամ կը պատահի որ սուտ անուն մը կը տրուի թէպէտ, սակայն վերջապէտ անուն մը կը արուի, եւ ասի բաւական կ'ըլլայ : Կամ մէկը կ'ըլլայ, օրինակի համար դատախազը, որ կը ճանչնայ զամբաստանեալը, եւ զանի կը նշանակէ ո՛ր եւ է կերպով մը : Այս պարագայիս մէջ ամենափոքր տեղեկութիւն մը չը կար : Եւ որովհետեւ ձերբակալեալը գտնուած էր Աէն - Նիքոլա անուն նաւահանգստին քով, բնականաբար ձերբակալեալը կոչուեցաւ Աէն - Նիքոլա նաւահանգստի մարդ, եւ երբ հարկ եղաւ արձանագրութիւնն ընել, հետեւեալ յիշատակութիւնը նշանակուեցաւ մէջը . Տիւրօր (Նիքոլա) : Յետոյ Նիքոլա Տիւրօր անունով որոշուեցաւ դատավարութեան ժամանակ :

Իսկ ամբաստանութեան կէտերը չէին պակսեր : Նիքոլա Տիւրօր ամբաստանեալ էր անպարկեշտութեան, դատարկաշրջկութեան եւ մուրացկանութեան յանցանօք :

Կէս գիշերուած տասներկուքը նոր զարդեր էր աղաբաստրեայ եւ ոսկեղին Լուի Ժֆ կոչուած փոքրիկ ժամացոյց մը՝ որ դրուած էր Պօրտօ քաղաքը Պ. Եւ Տիկին տ'Արվիլի ապարանաց մէկ ննջարանին մէջ։ Տիկին տ'Արվիլ որ թեթեւ քուն ունէր, արթնցաւ ժամուն վերջին թնդիւնէն եւ տեսաւ որ իւր ամուսինն իւր քովը չէր։ Ինքը պառկած էր տասն ու կէսին, որ ժամ իննին եւ կէս գիշերուան մէջ տեղ օրինաւոր միջոց մի է։ Շատ ուշ պառկելու չէ, շատ կանուխ ալ պառկելու չէ։

Իրեն ա'յնպէս թուեցաւ որ քնացեր էր, բայց չէր գիտեր ո'րչափ ժամանակ։ Գուցէ ժամը տասն եւ մէկ զարկած էր։ Կէսին՝ որ բնաւ տեղեկութիւն մը չէր տար, մտածեց որ դեռ երեսուն երկար վայրկեաններ ըսպասելու էր ժամը քանին ըլլալը գիտնալու համար, ուստի ելաւ անկողինէն։

— Կէս գիշերը կէս ժամ անցեր է, ըսաւ նորէն պառկելով։ Ուր գացած կրնայ ըլլալ։ Ի թատրո՞ն։ Բայց թատրոնը խիստ մօտ է, պէտք էր տուն դարձած ըլլար։ Ակմբատեղի՞ն արդեօք։ Բայց նա ինձ խոստացաւ որ մէյ մ'ալ հոն ոտք չ'կոխէ։ Այսօր բնաւ տեղ մը ցայդահանդէս չի կայ։ Զեմ

կարծեր թէ սրճարան գացած ըլլայ, Արդեօք նա կարոն գետէն անցնիլ ուզեր է խոճառէլով մը եւ այն ալ ընկղմե՞ր է։ Բայց նա բնաւ խոճառէլ չը նստիր։ Գուցէ գողերը վրան յարձակեցան։ Դեռ երէկ գիշեր պատահեր էր այդպիսի բան մը։

Ժամը մէկն եղաւ նէ, ա'լ չը համբեռեց։ բոլորովին ելաւ անկողինէն։ Ճագներ վառեց եւ կարդալ ուզեց։ Յետոյ իւր սենեկի սպասուհին կանչեց զանգակով։

— Տէրդ բան մը չըսա՞ւ։

— Ոչ, Տիկին, դուքս ելաւ ըստ սովորութեան։ Յետոյ ժամն երկուք, երեք եղաւ, եւ Սօսթէն տուն չը դարձաւ։ Այն ատեն սկսաւ նամակ մը գրել։

« Սիրելիդ իմ Սօսթէն։

« Ես քեզի ի՞նչ ըրի։ Դու լաւ գիտես որ ես կը սիրեմ զբեզ։ Տասն տարի է որ ամուսնացեր ենք, ես ուրիշ զբաղմունք մը չունեցայ բայց բեզի հաճոյանալ։ Եթէ մէջերնիս բնաւորութեան դժուարութիւններ ծագեցան, ես ամէն բան յանձն առի զանոնք դիւրացնելու համար։ Ես քեզ զոհեցի ա'յն սովորութիւններն ու յարաբերութիւնները զորս դու չէիր սիրեր։ Գրգորիչ վիճաբանութիւններէ խորչելու համար՝ բնաւ քեզի հակառակ չը խօսելու դրութիւնը ձեռք առի։ Ալ աւելին ըրի։ Գու ամէն պատ

հանջներդ կատարեցի , եւ ես կրնամ խոս-  
տովանիլ եթէ դու չը խոստովանիս , թէ ես  
ամէն պարագայի մէջ քու կամացդ հպատա-  
կելու օրինակը տուի : Եթէ իմ մրցումն մի-  
այն քու ցրտութեանդ դէմ ըլլար , գոնէ  
միսիթարութիւն պիտի ունենայի մտածե-  
լով թէ շատ կիներ ինձմէ աւելի երջանիկ  
չեն : Բայց դու չես կրնար ուրանալ գոր-  
ծած պակասութիւններդ . կնոջ մը դէմ  
գործուած ամենածանր պակասութիւններ ,  
թէ որ ուրիշներն ըլլային , կը բարկանային ,  
իրաւացի զանգատներ կ'ընէին , եւ գայ-  
թակզութեան եւ գժտութեան տեղի կու-  
տային : Ես բան մը չըսի , բերանս չը բացի :  
Սպասեցի որ ժամանակը ջնջէ այս յիշատակը  
եւ այս յիշատակիս նորոգման առիթները  
նուազեցնէ : Մինչեւ անգամ զուարթերես  
երեւցայ միշտ , իմ պարտիքս իմ զայրտիթէս  
վեր դասելով , քեզի համար եղայ սիրակիր  
եւ հնագնադ ամուսին մը , եւ հարկ չէ ը-  
սել միանգամայն հաւատարիմ : Եւ ահա զիս  
նորէն կը թողուս , առանց մտածելու թէ  
ի՞նչ վիճակի մէջ կը գտնուիմ ես մեր մար-  
դոց , իմ ընտանեաց , մեր բարեկամաց եւ  
աշխարհի առջեւ քու այսպէս երթալովդ :  
Կ'աղաչեմ , դարձի՛ր : Եթէ դարձեալ քեզի  
անհաճոյ բան մը կայ , ըսէ՛ ինձի , եւ ես  
կ'աշխատիմ որ այն բանը մէյ մ'ալ ըըլլայ :

Ես առանց քեզի շատ թշուառ եմ , եւ դու  
շատ բարի ըլլալովդ իմ վշտանալս չես ուզեր :  
« Կը փարիմ քեզ շատ տիսրութեամբ ,  
որովհետեւ հեռուէն փարում մի է , սա-  
կայն խիստ գործվալի :  
« Քեզ այնչափ սիրող կինդ  
« ՀԱՆՐԻՒԹ »

Նամակ դրելը բան մը չէր . խնդիրը զայն  
իւր տեղը հասցընելն էր . եւ Տիկին ա՛Ար-  
վիլ գրած ատենը ճանչցեր էր այս գժուա-  
րութիւնս . բայց սկսեր էր գրել իւր վըշ-  
տին ազատ ընթացք մը տալու համար , որ-  
պէս զի նամակը կարենայ երթալ այս փա-  
խըստականիս մէկ հետքը գտնուածին պէս :  
Վասն զի չէր կրնար տարակուսիլ թէ պա-  
րոն ա՛Արվիլ թողած գացած էր . եւ այս  
երրորդ անգամն էր որ կը պատահէր : Ո-  
ռաջին անգամ յայտնապէս իւր արկղերը  
պատրաստեր , կնոջը փարեր էր գեռ կառը  
չը նստած , փոքրիկ ճանապարհորդութիւն  
մը պիտի ընեմ ըսելով եւ այնուեհտեւ իւր  
վրայօք բնաւ լուր մը չէր տուած : Թղթա-  
տարով , հեռագրաւ եւ անձնուէր բարե-  
կամաց միջնորդութեամբ որոշեր էր ետ  
գառնալ : Երկրորդ անգամ , ելած գացած  
էր պարզ պայուսակով մը , մինչդեռ իւր  
կինը պատրագի գացած էր , եւ մարդու  
չէր ըսեր իւր ուր երթալիքը . շատ շա-

բաթներ շատ յոդնութիւններով վիճառուելէն վերջը ուր ըլլալը գիտցուեր էր, եւ որովհետեւ չէր ուզեր վերադառնալ, հարկ եղած էր որ կինն ինք երթայ առնէ զինքը բերէ գրեթէ բռնութեամբ եւ հաստատէ զինքը իւր ամուսնական բնակարանին մէջ :

Այս անգամ ա՛լ աւելի ծանր էր . իւր աշխատութեան սենեակն եւ հանդերձախուցը դիտելով հասկցուեցաւ որ բնաւ բան մը չէր տարած իւր հետը, եւ ո՛չ իսկ փոխնորդ շապիկ մը . գաւազանը ձեռքը դուրս ելած էր, որպէս թէ փողոցին ծայրն եղող մէկ բարեկամը տեսնելու դացած ըլլար : Հետեւապէս լուսցածին պէս կանուխմէկ Տիկին տ' Արվիլ հօրը եւ մօրը տունը գնաց եւ այս նոր դէպքս ծանոյց իրենց :

— Բայց վերջապէս այս մարդս ի՞նչ ունի ինձի դէմ, կ'ըսէր կամաց կամաց լալով, սպասաւորներն ոտք չը հանելու կամար ծայն չը հանելով : Ես իրեն կամար ունիմ ա՛յն ամէն յարգանքն ու պատիւն՝ զորս կին մը կրնայ ունենալ իւր ամուսնոյն համար : Նիւթական բարեկեցութեան համար կը հսկեմ որ բանի մը պակասութիւն չ'ունենայ, եւ կրնամ առանց ինքինքս շողզքորթելու ըսել թէ տունս շատ կանոնաւոր տուն մի է . բան մը զանց չեմ ըներ իրեն հաճելի ընկեր մը ըլլալու համար : Կը կարդամ իւր լրա-

դիրներն ու հանդէսները՝ որոնք գլուխս կը ճաթեցնեն, որպէս զի կարենամ իրեն պատասխանել երբ խօսելու ըլլայ աղոնց վըրայ : Միշտ պատրաստ եմ հետը դուրս ելնելու թէ որ օդ առնելու փափաքի, կամ տունը մնալու, թէ որ տեղէն երերալ չ'ուզէ : Իրեն ընտրութեանը կը թողում իմ հագնելիքս, կապուելիքս : Չ'ունիմ անանկ բարեկամ մը կամ բարեկամուհի մը որոնց սէրը կասկած պատճառէ իրեն : Ես միայն զինքը կը սիրեմ աշխարհի վրայ եւ փոխադարձութիւն ալ չեմ ուզեր թէ եւ իրաւունք ալ ունիմ . իւր բոլոր բարեկամները միրով կ'ընդունիմ, թէպէտ եւ ասոնք հընազգեստ գպրօցի ընկերներ, բանակի ըսպաներ են որ միշտ բարեկիրթ չեն, կամ նոր բարեկամներ՝ որոնց համար մարդ պատասխանատու չէ : Մինչեւ անգամ տիկին տ' Օսթրաքը տեսնելու հաւանեցայ, որն որ անշուշտ մարգարիտ մի չէ : Ասկից աւելի ի՞նչ կրնամ ընել :

— Ոիրելի զաւակս, ըսաւ հայրը, ամենն այս չէ . մարդս ո՛րչափ կատարեալ կին մ'ալ ունենայ, եթէ բնաւորութիւնը գէշ է, կարելի չէ արգիլել զինքը չուելէ : Ան մինակ գացած չէ :

— Ո՛հ, ես աղոր չեմ հաւատար . նա՞միանգամ մոռցաւ ի'նչ որ ինձ եւ իւր ան-

ծին պարտական էր . այն ալ անկարեւոր քմահաճութիւն մ'էր , եւ երկար ատենէ ի վեր այդ ալ վերջացած է : Ասկից զատ , երբ միւս երկու անդամին որ ձգեց գնաց , զինքը գտան միայնակ այնպիսի տեղ մը՝ որ բնաւ կառկածանաց տեղի չէր տար : Եւ դարձեալ այս անդամ կ'երդնում որ հետը բնաւ մէկը չը կայ : Ո՞չ : Վասն զի նա ինձի դէմ ատելութիւն մ'ունի , անքացատրելի ատելութիւն մը :

— Յաւալին այն է որ , ըստ մայրը , զաւակ չ'ունիք . մարդ կինը կը թողու բայց զաւակները չը թողուր :

— Անշուշտ շատ ցաւալի բան է այս , պատասխանեց Տիկին տ'Արվիլ . բայց ի՞նչ կրնամ ընել ես ասոր : Զգել երժալով չը փոխուիր այս զինակս :

— Վերջապէս , ըսին , հիմակ խնդիրը զանի նորէն գտնելու վրան է :

Ասոր վրայ՝ բոլոր գերդաստանն իսկոյն ձեռնարկեց գործի . նամակ զրուեցաւ ամէն կողմ , այն ամէն անձանց՝ որ ո՛ր եւ է երկրի մը մէջ կարող կ'ըլլային Պարոն տ'Արվիլը տեսնելու կամ անոր վրայ խօսուիլը լսելու առիթն ունենալ , և ամէն օգտակար տնօրէնութիւններն ձեռք առնելէ վերջը , հարկ եղաւ համբերութեամբ սպասել :

Իսկ Տիկին տ'Արվիլ տուն դառնալով՝

իւր վաղաժամ եւ ժամանակաւոր այրիութիւնը կարգադրելու համար հրամաններ տուաւ : Իւր դուռը գոցեց ամէն մարդու առջեւ , չուզելով եւ ո՛չ զոք ընդունիլի բացակայութեան իւր ամուսնոյն , միայն իւր հայրն ու մայրը , Պարոն տ'Արվիլի ծերունի քոյրն եւ եկեղեցւոյն քահանայն . դուրս կ'ելնէր մրայն եկեղեցի երթալու համար , այն ալ միշտ հետը մէկն առնելով : Վերջապէս նայեցաւ որ ամէն բան , ամէն ժամանակ պատրաստ ըլլայ ընդունելու համար իւր ամսւսինն՝ իւր վերադառնալ ուղած օրը :

գ.

Պայծառ արեւու մը ճառագայթները թափանցած էին Աէն Բէլշէի կոչուած բանտին մինչեւ բակը , որ յատկացեալ է կասկածելի համարուած բանտարկելոց ըրջագայութեան : Ոյս գունաթափ դիմօք եւ ցնցոտեօք հագուած թշուառաց մէջ առաջին ակնարկով կ'որոշուէին երկու մարդ որ հոս եկած էին սխալմամբ :

Ասոնցմէ մին նոր , մաքուր եւ պատուական զգեստներ հագած էր , եւ նկուլա Տիւբօրն էր այս : Բանտին արձանագրու-

թեանց նայելով կը տեսնուէր թէ այս մարդս  
բանտն եկած էր ողորմելի վիճակի մը մէջ ,  
հագած հին բաննալցն մը , աղտոտ սէնթէ մը ,  
մերկոտն , գլուխը բաց , առանց շապիկի և  
առանց թաշիինակի . ունէր միայն 87 ֆը-  
րանք 50 սանթիմ , որ դրուած էր բան-  
տին սնտուկը :

Սյս վիճակիս վրայ արգահատելով տնօ-  
րէնը , անմիջապէս այս եղելութիւնս հա-  
զորդեր էր բանտարկելոց զգեստներն հո-  
գացող ընկերութեան նախագահուհւոյն ,  
որն որ մէկը խրկեր էր , եւ նա՝ նորեկին  
բացարձակ մերկութիւնը քններ եւ բարե-  
կիրթ մարդ մ'ըլլալը ճանչցեր էր :

Նիքօլա Տիւրօր յայտներ էր ազատա-  
բար իւր թշուառութիւնը , և փափաք ցու-  
ցուցեր էր ունենալու վայելուչ հանդերձ-  
ներ , նա՝ մանաւանդ ճերմակեղէն , որուն  
պակասութեանը վրայ շատ կը ցաւէր : իւր  
այս օրինաւոր փափաքը լրացուցած էին ան-  
յապաղ խոստում առնելով իրմէ առանց  
վիճարանութեան , թէ պիտի համաձայնէր  
բարեգործական ընկերութեանց կանոնա-  
դրութեանց՝ որոնց նպատակն էր բարե-  
խառնութիւնը տարածել , ծխախոտի զեղ-  
ծումը բառնալ եւ քաջալերել ի բարին : Ըն-  
կերութեան այս առատասրտութեան վրայ  
Նիքօլա Տիւրօր ոստիկանութեան գործա-

կալին դարձուցած էր շնորհակալութեան  
նամակաւ մը իւր զգեստները՝ որք թէսլէտ  
եւ հին , սակայն ճոխութեան կերպարանք  
մ'ունէին :

Միւս մարդը բնաւ իրաւունք չ'ունէր մի  
եւ նոյն նպաստին , վասն զի հագուած ե-  
կած էր . իւր հանդերձներն շատ վայելուչ  
էին , որով մասնաւոր թշուառութեան մը  
կերպարանքն ստացած էր . վասն զի չը կայ  
ա՛յնչափ տգեղ բան մը՝ որչափ նորածեւ  
աղտոտ շապիկ մը . վայլուն՝ իսկ գարշա-  
պարները ծուած կօշիկներ , եւ անօրինակ  
եւ գէշցած զգեստ մը : Ասոր անունը Ար-  
թուր Բօմիէ էր . բայց այս անունով ճանչ-  
ցուած չ'էր . վասն զի իւր կենաց զանազան  
պարագայներուն մէջ աւելի նախամեծար  
անուններ կրած էր , ինչպէս Լէսթիւժի-  
էր , Լա Ռոքի կոմն , Փառալիէրի եւ Բօլսի-  
տօֆ : Կ'ըսէին որ առանց օրինաւոր պատ-  
ճառի զանազան դումարներ սեպհականած  
էր իրեն :

Բարեսիրական ընտանութիւն մը հաս-  
տատուած էր սկիզբէն այս երկու բանտար-  
կելոց մէջ տեղ , որով հակապատկեր մը կը  
ձեւանար ա՛յն զինեմոլաց , աղքատ գողե-  
րու եւ ստորին պարահանդէսներն յաճախող  
մարդոց բազմութեան հետ՝ որով կը բաղ-  
կանար բանտին ժողովուրդը :

Արթուր Քօփէ տեսնելով առաջին օրը  
Նիքօլա Տիւբօրի ներս մտնելու այն արդէն  
ծանօթ վիճակին մէջ, անմիջապէս հասկցած  
էր թէ ծանօթանալու արժանի մարդ մ'էր,  
եւ Նիքօլա Տիւբօր առանց իրաց խորը թա-  
փանցելու, աւելի ընտրած էր ասոր հետ  
կենակցիլ քան թէ այլոց հետ, վախնալով  
ոջիլէ :

— Զեր գործն ո՞ւր մնաց, պարո՞ն, ը-  
սաւ Նիքօլա Տիւբօր :

— Ես այսօր շատ գոհ չեմ: Շատ տա-  
րիներ առաջ գործած եւ մոռցած ոճիրներս  
փնտոելու եւ ըննելու ելեր են, հետեւա-  
բար ամբաստանութեանց թիւն օր ըստ  
օրէ կ'աւելնայ: Այս կէտիս վրայ բարե-  
փոխութիւն մ'ընել պէտք է: Վասն զի՞ բը-  
նաւ նկատողութեան չ'առնուիր թէ ո'րչափ  
դժուարին է ամբաստանեալի մ' ինքզինք  
պաշտպանել այնպիսի ամբաստանութեանց  
դէմ որ հեռաւոր ժամանակի մը կը վերա-  
բերին :

— Ստոյգ է: Շատ դժուարութիւն կը  
կրէ մարդ իւր անպարտութիւնը յայտնող  
վկայները նորէն գտնելու:

— Ասկից զատ զիս պատուիրակի (Հայուշ)  
գրագիր կը կոչեն: Միայն վեց ամիս պատ-  
ուիրակի գրագրութիւն ըրի, այն ալ տաս  
տարի առաջ: Եւ ես այն ատենէն ի վեր

ապրեցայ միշտ ազնուականի մը պէս առանց  
բան մ'ընելու, ժամանակս անցունելով ձի-  
արշաւի, հանքային ջրոց բաղանեաց ակրմ-  
բոց, թատրոններու եւ մասնաւոր սենեակ-  
ներու մէջ: Սակայն ասոնց համար ես միշտ  
պատուիրակի մը գրագիրն եմ: Կը տեսնէք  
որ նշանակութիւն չ'ունի այս բանս :

— Զարմանալի բաներ կ'ըլլան: Դուք  
ինձի չ'ըսի՞ք որ ձեր առած անուններուն կը  
հակառակին: Ինձի համար ալ բոլորովին  
ասոր հակառակն է: Ես բնաւ անուն չեմ  
ընդունիր, եւ բռնի անուն մը կուտան ին-  
ձի: Կը տեսնէ՞ք որ բնաւ օրինաւորութիւն  
չը կայ:

Ցետոյ, յանկարծ միտքը փոխելով, Նի-  
քօլա Տիւբօր յաւելցուց կատարեալ երանու-  
թեան եղանակաւ մը.

— Ի՞նչ գեղեցիկ օդ :

— Այո՛, պատասխանեց Արթուր Քօփէ,  
նուազ կենդանի եղանակաւ: դուրսը շատ  
գեղեցիկ ըլլալու է:

— Ստուգապէս, մարդ շատ հանգիստ  
է հոս :

— Բայց կին չը կայ:

— Ո՛չ, ո՛չ :

— Ո՞ւր կը տեսնէք հոս կին :

— Փառք Աստուծոյ, կին չեմ տեսներ  
հոս: Եւ կին չը տեսնելու համար բանտար-  
կել տուի ինքինքս :

— Զեր գաղտնեաց խորը թափանցել չեմ ուզեր , պարոն , բայց չեմ կրնար հասկընալ թէ . . .

— Կեցէք , ես կրնամ՝ ձեզ պատմել իմ պատմութիւնս . Եւ զիս մատնելով բնաւշահ մը չէք կրնար ունենալ , միայն կ'աղաւչեմ ձեզի , որ ուշադրութիւն ընէք ըսելիքներէս բան մը չըյայտնելու մէկու մը : Դուք պարկեշտ մարդ մի էք . . .

— Այս տունս՝ ուր պատահեցանք իրարու , կրնայ ձեզի երաշխաւոր ըլլալ այս բանիս , պատասխանեց Արթուր Բօ միէ , խոնարհելով շնական ժպիտով մը :

— Ես երջանիկ էի , պարոն , չեմ գիտեր ի՞նչ հով փչեց գլխուս , ուզեցի աւելի երջանիկ ըլլալ : Զիս ամուսնացնել ուզեցին , եւ ես ականջ դրի այս աղջտալի խրատուս , որն որ սակայն պէտք էր զարթուցանել իմ կասկածանքս , վասն զի իմ լաւագոյն բարեկամներէս կուգար ինձի : Մի կարծէք թէ ես ամուսնութիւնը քննադատել կ'ուզեմ . կ'ուզես զայն համարէ ամենամեծ բարիք մը կամ հարկաւոր չարիք մը , ամուսնութիւնն իրաւացի բան մ'է : Բայց ո՛րավիսի շրջահայեցութեամբ պէտք է կատարել զայն : Փիչ մը գիտնալով այս բանս՝ իմ ընտրութիւնս ըրի ամէն երեւակայելի երաշխաւորութեամբ . ունէի հարստութիւն , գեղեցիկ

անուն մը , եւ արտաքին կերպարանք մը՝ որուն մնացորդը կը տեսնէք , եւ հետեւաբար կրնայի ընտրել բաւական ընդարձակ շրջանակի մը մէջ : Շատ պատուաւոր ընտանեաց աղջիկները մերժեցի , վասն զի միշտ անոնց վրայ կը տեսնէի բան մը՝ որ բոլորովին կատարեալ չ'էր : Ինձի կ'ըսէին որ աղէկ բան մը չ'էր ըրածս , թէ պէտք չ'է ա՛յդչափ պահանջող ըլլալ , թէ երջանկութիւնն աւելի կամ նուազ պակասութիւններէ կախում չ'ունի . Ես այս ամէնուս չ'էի ուզեր հաւատալ : Ես կը պնդէի գտնել կին մը՝ որուն դէմ բան մը չը կրնայ ըսուիլ :

— Ո՛չ , կեցիք չունչ առնեմ : Ըսելէ թէ ամուրի մնացիք :

— Ո՛չ , ամուսնացայ :

— Ըսելէ թէ ձեր պահանջումները բոլորովին մէկ կողմէ դրիք :

— Բնաւ ամենեւին : Ես կատարեալ կին մ'առի :

— Հիմակ կը հասկնամ : Երբ հետն ամուսնացաք՝ կատարեալ էր , բայց յետոյ . . .

— Ո՛չ , չը հասկցաք . Նա՛ միշտ կատարեալ է . եւ ահա՛ այս բանս է որ իմ կեանքս կը թշուառացնէ : Ամէն բան լաւ էր , հարբատութիւնը բաւական՝ առանց անհամեմատութեամն : Ընտանիքը՝ անսգիւտ ընտանիք մը . ինքը հրեշտակ մը : Բարեկիրժ , ա-

զատ ցուցամոլութենէ . ուստեալ եւ ո՛չ ի-  
մաստակ : Դաշնակ գիտէ բայց չը զարներ :  
Ո՛չ թէ գեղեցիկ է ա՛յն գեղեցկութեամբ՝  
որ գոռողութեան աղբիւր մ' է կնոջ հա-  
մար , եւ տանջանաց աղբիւր մը՝ ամուսնոյն  
համար , ա՛յլ ունի կանոնաւոր դէմք մը եւ  
վայելուչ հաստակ մը : Երբ հետն ամուսնա-  
ցայ , երիտասարդ աղջկան մը վայել հա-  
մեստութիւն մ'ունէր . յետոյ , առաւ ա՛յն  
համարձակութիւնը՝ զոր կին մը պարտի ու-  
նենալ , առանց կորուսանելու իւր սեռին  
բնական եղած զգուշութիւնը : Երբ հետն  
ամուսնանալ ուղեցի , բնաւ արհամարհանք  
մը չը յայտնեց իմ անձիս համար . ո՛չ ալ ա-  
ճապարանք մը ցցուց , որ կրնար անխոհա-  
կան երեւիլ . հետեւապէս ամուսնացաւ իւր  
ծնողաց կամօքը , ա՛յն ճշմարիտ համոզմամբ  
թէ իւր ամուսնութիւնն իրեն համար մեծ  
բարութիւն մ' էր : Ամուսնութեանս նա-  
խընթաց օրը անհանգստութիւն մը տիրեց  
սրտիս : Իմ առած տեղեկութիւններս կա-  
րելի եղածին չափ կատարեալ , խորին եւ  
նուրբ ըլլալով հանդերձ , բնաւ փոքրիկ  
պակասութիւն մը չ'էի գտած : Եւ ահա՛ այս  
էր որ զիս անհանգիստ կընէր :

Ինքնիրենս կ'ըսէի . « Այսչափ կատարե-  
լութիւն կարելի չ'է : Այս բացարձակ կա-  
տարելութեան երեւոյթին տակ ահագին

մոլութիւն մը ծածկուած ըլլալու է » : Բայց  
որովհետեւ բանը բանէն անցած էր արդէն ,  
չէի կրնար ա՛յլ եւս ընկրկիլ . հարաանիքս  
կատարուեցաւ . միայն առաջին օրերն եր-  
կիւղի մէջ ապրեցայ : Գաղտնիքի մը երեւան  
ելնելուն կ'սպասէի միշտ : Բայց պարապ  
տեղը : Ժամանակն անցաւ , եւ գաղտնիք մը  
չը գտայ , որովհետեւ բան մը չը կար :

Վասն զի այս կինս արդարեւ կա-  
տարեալ էր , եւ այսօր իսկ բացարձա-  
կապէս կատարեալ կին մ'է : Ո՛հ , պա՛րոն ,  
չէք գիտեր այս բանս ո՛րչափ վշտացուց  
զիս : Կին մը՝ որ միշտ ճշգութեամբ կը կա-  
տարէ իւր պարտքը , ո՛չ աւելի , ո՛չ պա-  
կաս , ասոր ի՛նչպէս բան ըլլալն հասկնալու  
համար , մարդ աչքով տեսնելու է : Իրեն՝  
բնաւ ամենափոքը յանդիմանութիւն մ'ը-  
նելու պատճառ մը չ'ունէի . երբէք փոքրիկ  
քննադատութեան մը տեղի չը տուաւ : Եւ  
սակայն ես այս ամէնս անմիջապէս չը նըշ-  
մարեցի : Ինչպէս որ կը հասկնաք , ես ա-  
ռաջին օրերը տուած էի զինքս բոլորովին  
տանս մէջ երիտասարդ կին մ'ունենալուս  
հաճոյից եւ ուրախութեան , հետեւապէս  
աւելի զբաղեալ էի սրտիս ճայնին լսելու ,  
քան թէ կնոջս սիրտը նայելու : Սակայն կա-  
մաց կամաց հանդարտեցայ . եւ երբ նո-  
րութեան ջերմութիւնն անցաւ , ա՛յն ատեն

աւելի միջոց ունեցայ իմ երջանկութեանս  
տարածութիւնը չափելու : Այն ատեն սկը-  
սայ դիտել Տիկին տ' Արվիլը . . . Այ, ա-  
նունս ըսի : Կ'աղաչեմ, մոռցէք զայն . . . :  
Եւ շուտով նշմարեցի որ այս կինս որուած-  
էր ամէն ըրածն աղէկ ընել : Ինձի համար  
սէր ունենալ կը թուէր . եւ կրնամ ըսել ա-  
ռանց ունայնամտութեան թէ ամուսնական  
սէր կը յայտնէր ինձի :

Բայց ես կ'զգայի որ ամուսնական սէր  
էր այս : Ես յանցանք չեմ սեպեր այս ռանս  
իրեն . միայն այս սէրս երդուընցած էր ինձ.  
Ես ալ միայն այս սիրոյս կ'սպասէի, եւ պի-  
տի վշտանայի եթէ ուրիշ տրամադրու-  
թեանց մէջ տեսնէի զինքը : Բայց մեր մէջ  
չեմ գիտեր ի՞նչ էր այն օրինաւոր բանը՝ որ  
իմ պակասութեամբս կ'սկսէր թունաւորել  
իմ երջանկութիւնս : Ուրիշ կիներ ունին  
յոգնութեան վայրկեաններ, յորս կը մեր-  
ժեն կամ չ'են ընդունիր կամովին իրենց  
ներշնչած զգացումները, կամ կ'ունենան  
կրից բորբոքներ որ անժամանակ կը յայտ-  
նուին . այս կինո բնաւ զիս չը ձանձրա-  
ցուց եւ միշտ լաւ ընդունելութիւն ըրաւ  
ինձ : Կը կարծէր իսկ թէ սպարտական էր  
գոհութիւն եւ ուրախութիւն յայտնել ինձ,  
երբ իմ սէրս եւ գորովս ցոյց կուտայի իւր-  
եան . եւ այս բանս կ'ընէր, երբ կը տես-

նէր որ զինքը չը ձանձրացնելու համար ինք-  
զինքս կը զապէի : Ես կ'զգայի որ ամէն պա-  
րագայի մէջ կը կատարէի իւր պարտքը ,  
այնպէս լաւ կերպով, որպէս ոլէտք է կա-  
տարէ մարդ մը, երբ պարտք մ'է կատա-  
րելիքը :

Մի եւ նոյն կատարելութիւնը ցոյց կու-  
տար իւր ընթացիկ կենաց ամէն գործոցը  
մէջ . իւր արդէն ու զարդը՝ մեր վիճակին  
յարմար, ընտիր էր առանց նշանաւոր ըլ-  
լալու . սեղանը բաւականասիրութեամբ կը  
վայլէր, կարասիները լաւ վիճակի մէջ էին,  
ծառաները բարեկիրթ, ծախքերը ճշղեալ,  
ըստ խոհական համեմատութեան կենաց  
զանազան պիտոյից մէջ : Եւ արդարեւ ա'յս  
այսպէս ըլլալու է : Եւ երբէք խոտարում  
մը, երբէք քմահաճութիւն մը, վերջապէս  
բան մը՝ որ խոհական եւ իրաւացի չըլլայ :  
Նոյն իսկ հաճոյքն ունէր իւր իրաւացի տեղը  
մեր կենաց մէջ . հարկ էր միջոց միջոց  
թատրոն, նուագահանդէսի եւ պարահան-  
դէսի երթալ . բաւական բայց ո'չ շատ : Եւ  
ի՞նչպէս որ կը տեսնէի զանի ինձի հետ,  
այնպէս կը գտնէի զինքը ամէն մարդու  
հետ . յարգանօք կապուած իւր հօրն ու  
մօրը, լի մեծարանօք իւր միւս ազգականաց  
համար, սիրավիր իւր բարեկամուհեաց հա-  
մար՝ ա'յն ալ չափաւորութեամբ, ինչպէս

որ վայել է կնոց մը՝ որն որ նախ իր անձը պարտի իր ամուսնոյն։ Երջահայեաց աշխարհի յարաբերութեանց մէջ, գթասիրտ թշուառաց համար, առանց խարուելու սուտ աղքատներէ։ Բարեսէր՝ սակայն հաստատամիտ ծառայից հետ։ Այս ամէնս վերջապէս անտանելի եղաւ ինձ։ Աւելի կ'ընտրէի անոր վրայ տեսնել հարիւրաւոր պակասութիւններ, որոց դէմ կրնայի ինքզինքս պաշտպանել, քան թէ բաղխիլ միշտ այս անողբելի կատարելութեան՝ որուն դէմ ապազինեալ էի բոլորովին։

Տարիներով մրցեցայ, ոպասելով իւր կողմէն պարտութեան մը՝ որպէս զի ոտքերն իյնամ, եւ պակասութեան մը՝ զոր ներելու երջանիկ պիտի համարէի ինքզինքս։ Բնաւ եւ ո՛չ մէկ անգամ չը խոտորեցաւ ամենաբացարձակ ուղղութենէ։ Ալ խենդենալուս բան մը չը մնաց։

— Սիրելի պարո՞ն, ըսաւ Արթուր Բօմիէ անկեղծաբար սրտաշարժեալ, բռնելով սիրով իւր ընկերոջ ձեռքերը, բայց պէտք էր ըսէիք այս բանս իրեն։ Որովհետեւ այդշափ անձնուէր է, ձեզի համելի ըլլալու համար բնութիւնը կը փոխէր։

— Այս ալ ըրաւ։ Զէի կրնար իրեն ըսել։ «Դուք ձեր կատարելութեամբը զիս վերջին ծայր կը գրգռէք»։ Ինձի անհոգութեանց

եղած բանը հարկ էր իրեն իմացնել, այս ալ անկարելի էր ինձի։ ամէն ըրածը կատարելապէս լաւ է։ Բայց իրեն հակառակելու փորձ մ'ըրի, եւ ուզեցի իրեն ընել տալ իր չ'ուզած բանը։ Օրինակի համար, իրեն կը հարցնէի թէ ինչո՞ւ համար չէր պարեր։ իսկոյն կ'սկսէր պարելու։ և կը պարտաւորէի կեցնել զինքը՝ երբ որ յոդնած կը տեսնէի։ Եթէ այն տեսն իրեն հարցնէի թէ ինչո՞ւ համար այնչափ պարեր էր, կը պատասխանէր թէ ինձի հաճոյը պատճառելու համար էր։ Ի՞նչ ընէի։ Զէի կրնար ծեծել։

— Դուք բանը վերջին աստիճանի հասցուցեր էք։ Ինչո՞ւ չէիր թողուր որ իւր կատարելութիւնը պահէր։ Դուք ալ ձեր կողմէն ուրիշ տեսակ կետնք մը հնարելու էիր։

— Այդ ալ ըրի։ Նատ գէշ վարմունք մը առի ձեռք, որուն վրայ կը զղջամ։ Բայց ա'լ խելք չ'էր մնացեր գլուխու։ Խենդեցեր էի։ Մի՛ կարծէր թէ զուարձութեանո համար էր այս ամէնը։ այլ անտանելի վիճակի մը մէջ էի։ Պօրտօյի թատրոնին մէկ աղջրկանը հետ յարաբերութիւն կապած էի։ եւ երբ տունէս կ'ենէի իմ ժամադրութեանց երթալու համար, մեծ տաղտկութիւն մ'էր ինձ։ Բայց տան մը մէջ երկու կատարելութեանց համար տեղ չը կայ։ եւ որովհետեւ

նա կը յամառէր բնաւ պակասութիւն չը  
գործելու , պէտք էր որ ես ունենայի պա-  
կասութիւններ : Եւ նա լսեց իմ անկարգու-  
թիւններս :

— Ըսել է որ այն օրը գեղեցիկ տեսա-  
րան մ'ունեցանք :

— Բնաւ ամենեւին : Ըսաւ ինձի թէ շատ  
վիշտ պատճառած էի իրեն եւ սկսաւ լալ :  
Վասն զի եթէ լալու չըլլար , ըսել է թէ  
սիրտ չ'ունէր . եւ եթէ սիրտ չ'ունենար ,  
կատարեալ չ'էր ըլլար : Բայց որովհետեւ իւր  
արտասուըն վիշտ կը պատճառէին ինձ , թէ-  
պէտ եւ հարկաւոր եղածին չափ սահմա-  
նաւոր էին , ըսի իրեն թէ արդարեւ յան-  
ցաւոր էի ես . թէ բոլորով սրտիւ կը զըզ-  
ջայի այս պակասութեանս վրայ , եւ նա' ալ  
ինձ ներեց այնպիսի վշտագին ժպիտով մը  
որ ճշդիւ կը բովանդակէր ամէն ինչ որ կին  
մը պարտի կրել այնպիսի պարագայի մը մէջ:  
Ստուգապէս հրեշտակ մ'է այս կինս :

— Ո՛հ , ըսաւ Արթուր Բօմիէ կասկածա-  
նաց եղանակաւ մը , ես չ'եմ ուզեր սիրտդ  
վիրաւորով խօսք մ'ընել . բայց միթէ շատ  
ապահով էր թէ այս ամէն կատարելութիւն  
մեծ պակասութիւն մը ծածկելու համար  
չըլլայ . . . :

— Երանի թէ այդպէս ըլլար : Եթէ վը-  
րան պակասութիւն մը տեսնէի , ես իմ փըր-

կութիւնս կը գտնէի : Բայց կ'երեւի թէ  
զի՞նքը չէք ճանչնար : Իւր կեանքը ամենուն  
ծանօթ է . իւր ամէն վարկենից հաշիւը  
կարող է տալ փաստերով եւ վկաներով :  
Ասկից զատ ո՞վ կրնայ ըլլալ ա'ն մարդը որ  
կսմովին արհամարհէ ա'սովիսի կատարեալ  
արարածի մը յարաբերութիւնը :

— Ա'յն ատեն ի՞նչ ըրիք :

— Ա'յն ատեն իւր փարմունքին մէջ փո-  
փոխութիւն մը մտցնելու համար ճանքոր-  
դութիւն մ'ընել տալու փորձն ըրի : Ճանա-  
պարհորդութիւնը չը սիրեր . բայց ուր որ  
ուզեցի երթալ , հետո եկաւ , ամենայն եր-  
կայնամտութեամբ՝ իւր հրեշտակային կեր-  
պարանքը դիմադրելով ամենայն նեղու-  
թեանց : Հարկ եղաւ իւր տեղը բերել զին-  
քը , եթէ ո՛չ կը մեռնէր : Եւ յետոյ միայ-  
նակ գացի ես . մարդ խրկեց ետեւէս , բայց  
առանց գայթակղութիւն պատճառելու եւ  
գանգատելու : Ես նորէն ճգեցի գացի առանց  
ուր երթալս ըսելու իրեն . գտաւ հետքս  
նորէն . եկաւ զիս առաւ տեղս բերաւ , եւ  
աղաչեց ինձի որ ըսեմ իրեն թէ ի՞նչ էր ու-  
զածս , պատրաստ էր ամէն զոհողութեանց .  
Եւ ես ասոր կատարելապէս կը հաւատամ ,  
Այս ալ պիտի ըլլայ նոր կատարելութիւն  
մը : Բայց այս անգամ զիս գտնելիք չ'ունի :  
Ես ամէն զգուշութիւններս ձեռք առած

եմ։ Զգեստներս՝ որ կրնան զիս մատնելու ծառայել, խոշոր քարի մը կապուած ջուրին յատակն են։ Զիս տանջանքի ալ ենթարկելու ըլլան, ո՞վ ըլլալս չը պիտի ըսեմ։ Այս ոճիրներն՝ որոնց համար պատասխանատու եմ, ծանր ոճիրներ չեն։ քանի մը ամիս բանտարկութեամբ կ'աղատիմ։ Այս գերութեան ճաշակն առնելով կենաց միջոցներ պիտի հայթայթեմ անով ինձի։ Աորելու միջոց մը պիտի գանեմ, հոգ չէ՛ ինչպէս որ ալ ըլլայ, միայն թէ միանդամ եւս կնոջս երեսը չը տեսնեմ։

— Մենք նորէն կը գտնենք մէկզմէկ, ըստ Արթուր Բօմիէ զգածեալ կերպով մը։ Կրնաք վստահ ըլլալ վրաս։

---

## Գ.

— Նիքօլա Տիւբօ՞ր է անուննիդ, հարցուց հարցաքննիչ դատաւորը։  
— Ո՛չ, պարոն, բնաւ երբէք։  
— Սակայն այս անունով նշանակուած էք դատավարութեան թղթոց մէջ։  
— Ես աեղեկութիւն չ'ունիմ այդ փոփոխութենէն։  
— Ուրեմն ի՞նչ է անուննիդ։  
— Ես ծննդական անուն չ'ունիմ։  
— Սակայն ամէն մարդ ծննդական ա-

նուն մ'ունի։ Անշուշտ տեղ մը ծնած էք, տարիք մը ունիք։ ամուրի կամ ամուսնացեալ էք։ կարելի է այրի էք։

— Այս ըսածնուդ եւ ո՛չ մէկը ճշմարիտ է։ Ես գոյութիւն չ'ունիմ։

— Ուրեմն ձեր վախճանման թուղթը պէտք է ցուցնէք։

Ասկայն այս խիստ եզրակացութիւնն ընելով՝ չը կրցաւ խնդալը զսպել դատաւորը, հետեւապէս ըսաւ ո՛չ այնքան ծանրութեամբ։

— Եթէ ամէն մարդ ձեզի պէս պատասխանէր, վիճակագրութեան ցանկերը ի՞նչպէս պիտի լեցնէին։

— Ես այդ անպատեհութիւնը չը մտածեցի, ըստ ամբաստանեալն առանց շփոթելու։

— Քողունք այս կէտը։ Դուք մուրացկանութեան, թափառականութեան եւ անպարկեշտութեան յանցանօք ամբաստանեալ էք։ Բայց պարտիմ ձեզ յայտարարել թէ մուրացկանութեան յանցանքնիդ ըստ բաւականին ապացուցեալ չէ։

Սայդ է որ հասարակութիւնը գթալով ձեր վրայ, ձեզի ուտեստ եւ դրամ տուած է։ բայց գործակալաց տեղեկագիրը չ'ապացուցաներ թէ այս օդնութիւնները դուք խնդրած էք։ Կերեւի թէ հասարակու-

թիւնն այս օդնութիւններս ձեզի ինքնայորդոր որած է : Աէնի մէկ գետափին վրայ ա'յնալիս ողորմելի վիճակի մը մէջ զ տնուելնիդ կրնայ համարուիլ իբր անուզլակի կոչում մը հասարակաց կարեկցութեան : Բայց ես չեմ ուզեր չափազանց խստութեամբ փարուիլ ձեր հետ :

— Ճշմարտապէս ես բան մը չը խնդրեցի հասարակութենէն :

— Բայց խնդրելու զանազան եղանակներ կան : Լոելեայն խնդիր ալ կ'ուլոյ : Ի'նչ որ է նէ , ես մուրացկանութեան յանցանքնիդ զանց կ'ընեմ : Բայց թափառականութեան համար ի'նչ պիտի ըսէք :

— Թափառականութեան վիճակի մէջ գտնուելուս ըսելիք չունիմ : Սակայն իմ այս մասին ունեցած իրաւունքս ալ չ'եմ յիշեր , եւ օրինաց այս մասին արձակած վճիռն ալ չ'եմ յիշեր :

— Ես ըսեմ ձեզի . «Յօդուած 270մ» . թափառական կ'ըսուին անոնք՝ որ ո՛չ որոշ բնակարան ունին , ո՛չ ապրուստի միջոց , եւ որ սովորաբար արհեստ կամ գործ մը չ'ունին » :

— Ահա՛ բացարձակապէս ես ալ այդ վիճակին մէջ եմ :

— Ասոր պատիժը երեք ամիսէն մինչեւ վեց ամիս բանտարկութիւն է :

— Ես ալ գրեթէ այդպէս կը մտածէի :  
— Բայց ստուգապէս թափառականութեան վիճակի մէջ էք :

— Այո՛ , որովհետեւ ո՛չ բնակարան ունիմ , ո՛չ ապրուստի միջոց , եւ ո՛չ ալ արհեստ :

— Բայց ա'յս ըսածներնիդ ապացուցանելու էք : Կը կարծէք որ ձեր պարզ յայտարարութեան վրայ պիտի դատապարտուիք : Այս ըսածներնիդ գոնէ հարցաքննութեամբ պէտք է հաստատուի : Արդ ես համոզուած չ'եմ որ դուք բնակարան չ'ունենաք : Ընդհակառակն ա'յնպէս կը կարծեմ որ բնակարան մ'ունիք , սակայն կը ծածկէք :

— Ես բացը կը բնանայի : Ասոր բնակարան չ'են ըսեր :

— Զեր բնակարանէն դուրս ըլլալնիդ չ'ապացուցաներ թէ բնակարան չ'ունիք : Խոկ գալով ձեր ապրուստի միջոցներուն , ստոյգ է որ ապրուստի միջոց ալ ունէիք , մինչեւ ձեր ձերբակալութեան մօտալուտ պահուն , որովհետեւ քաջառողջ էք , և դեռ նոր մարմնաւոր խնամքներ ընդունած էիք , որոնք կանոնաւոր եւ պարապորդ սովորութեանց նշաններն են :

— Սակայն . . .

— Զէ՛ , զիս խաբելու մի՛ ելնէք : Դուք թափառական չ'էք :

— Բայց որովհետեւ այս յանցանքով կը հալածուիմ . . .

— Այս' կը հալածուիք . եւ ես սարտաւորեալ եմ հարցաքննելու զձեզ : Բայց եթէ հարցաքննութեամբ ապացուցուի թէ եղած ամբաստանութիւնն իրաւացի չէ , ես կրնամ ազատ թողու զձեզ :

Այս սպառնալեաց վրայ , պարոն տ' Արվիլի գլխուն մազերը տնկուեցան : Կը յուսար որ բանի մը ամիս բանտարկեալ կը մը նայ , որպէս զի ժամանակ ունենայ ետ գառանալու : Եթէ անմիջապէս ազատ թողուին դինքը , չէր դիտեր ի' նչ ընէ , որովհետեւ կամ պիտի պատահէր իւր կուզ կամ անոր բարեկամաց զորս անշուշտ զինքը փնտուելու հանած էր իւր կինը : Բայց այս վիշտը միայն մէկ վայրկեան տեւեց . որովհետեւ դատաւորը կրկնեց .

— Ուրիշ յանցանք մ'ալ ունիք , եւ այս յանցանքնիդ հաստատապէս որոշ է , որ է անպարկեցութիւննիդ :

— Այս' , այդ յանցանքս , աղաղակեց Պատ' Արվիլ , անուրանալի է :

— Ինքզինքնիդ պաշտպանելու համար ըստելիք մը ունիք :

— Բնաւ ամենեւին :

— Լաւ , ըսաւ դատաւորը : Ուոէք տարէք այս մարդը :

Հարցաքննիչ դատաւորը առաջին վայրկեանէն հասկցած էր թէ իւր առջեւ կեցող մարդը հասարակ շարագործ մը չ'էր : Նիւրօլա Տիւրօր կոչած անձերնին ո'չ մուրացիկ մ'էր իրաւամբ , ո'չ ալ իրօք թափառական մը : Նա կրնար մեծ եղեռնագործ մ'եղած ըլլալ ինքզինքը ծածկող . բայց զանի հարցաքններէն վիրը՝ դատաւորին մտքին մէջ այդ պիտի ենթադրութիւն մը չո մնաց : Իւր հարցաքննութեամբ նպաստաւոր տպաւորութիւն մը մնացած էր սրտին մէջ , եւ համոզուած էր թէ Նիւրօր Տիւրօր աշխարհի ամենէն պարկեցա մարդն էո :

Բայց ամէն դատաւորը կ'ուզեն որ մարդիկ պատասխանեն իրենց հարցմանցը : Իրենց արհեստին սովորութիւնները թոյլ չ'են տար իրենց հսկուալ թէ մարդիկ կրնան մասնաւոր պատճառներ ունենալ իրենց գործերը այլոց չը պատճելու . հետեւապէս յամառաբար մարդիկները խօսեցնել կ'ուզեն : Ուստի այս դատաւորս ալ զիտնալ ուզեց այս ամբաստանելոյս ինչպիսի մարդ ըլլալը : Այսու հանդերձ հասկցեր էր այս բանիս դժուարութիւնը , որովհեաեւ այս մարդս փոխանակ դատապարտութենէ մը վախնալու , զիտես թէ դատապարտութիւն մ'ընդունելու համար ամէն զիջմանց պատրաստ էր :

Մուրացկանութեան յանցանքը մէկ կողմ  
դրած էր . կը մնար թափառ ականութեան  
յանցանքը՝ որ կրնար հաստատուիլ : Իսկ  
անպարկեշտութեան յանցանքը յայտնի էր .  
բայց գործը շարունակելէ առաջ , դատա-  
ւորը հնարք մը փնտուեց որպէս զի նիքօլա  
Տիւրօր հարկադրի ինքզինք ճանչնելու . և  
գտած ըլլալ կարծեց այսպիսի տաղտկա-  
ցուցիչ հիւրէ մը ազատելու ճարտար եղա-  
նակը՝ առանց զանի ազատ արձակելու :

Նիքօլա Տիւրօրէն ուզեց իւր զինուորա-  
կան ժառայութենէ ազատած ըլլալուն վը-  
կայագիրը . այս ալ բնականաբար չո կրցաւ  
ցուցնել զայն . հետեւապէս նկատուեցաւ  
իբրեւ պարտազանց : Ըստ օրինի , այն մար-  
դը՝ "որ իւր օրինաւորապէս պարտական ե-  
ղած ժառայութեան ժամանակը լրացու-  
ցած չ'է , կը յանձնուի իւր բնակած տեղ-  
ոյն զինուորական իշխանութեան ձեռքը :

Ոիայն թէ Նիքօլա Տիւրօր բնակարան  
չ'ունէր . որովհետեւ կը հալածուէր իբրեւ  
թափառական :

Եթէ միանգամ բանտարկուէր վճռոյ մը  
զօրութեամբ , իւր բանտը պիտի ըլլար ի-  
բրեն համար իբրեւ օրինաւոր բնակարան մը .  
բայց բանի՛ որ նա ամբաստանութեան վի-  
ճակի մէջ մնար , անոր ո՛ր եւ է բնակարան  
լմ'ընծայե հակասութիւն մ'էր . վասն զի

բնակարան մը չ'ունենալուն համար ամբաս-  
տանեալ էր : Աակայն անկարելի էր ընդու-  
նիլ որ մարդ մը իւր զինուորական ծառա-  
յութիւնը կատարելու պարտականութենէն  
փախուստ տայ , կամ ինքզինք արդարացնէ  
զայն կատարած ըլլալուն՝ միայն ինքզինք  
ճանչնել չ'ուզելով պարզապէս : Այս զիւրին  
բան մ'էր :

Դատաւորն առիթ ունեցաւ այս մասին  
խորհրդակցելու զինուորագրութեան հրա-  
մանատարին հետ , որուն հետ սեղանի գըտ-  
նուեցաւ օր մը բարեկամուհւոյ մը տունը :

— Ուրեմն , երբ նա իւր դատապարտու-  
թիւնը կրէ , պիտի ուզէ՞ք զանի ինձմէ :

— Ամենայն սիրով : Գաղղիացի՞ է :

— Այնպէս կը նմանի :

— Բայց այսչափը բաւական չէ : Գաղ-  
ղիական բանակին մէջ օտարական չ'ըն-  
դունուիր : Գաղղիացի ըլլալը ապացուցա-  
նելու է :

— Իւր ծննդեան վկայագիրը չ'ունիմ որ  
գիտնամ :

— Ահա՝ դժուարութիւն մը : Քանի՞ տա-  
րեկան է :

— Երեսուն եւ հինգ քառասուն մը ըլ-  
լալուն է :

— Տարիքը գիտնալու պէտք մ'է : Որով-  
հետեւ եթէ տասն եւ ութ տարեկան չ'ըլ-  
լայ , զինուոր չը կրուիլ :

- Տասն եւ ութ տարեկանէն աւելի է :
- Ի՞նչպէս գիտէք : Մարդու մը տարիքը ակռաներուն նայելով չը գիտուիր :
- Մօրուքն ազուր մը եկած է :
- Սակայն մարդ տասն եւ եօթն տարեկան եղած ատենն ալ մօրուք կրնայ ունենալ : Ինչէ՞ն յայտնի է որ վաթսուն տարեկան չ'է :
- Ո՛չ, ո՛չ, ճերմակ մազ մը չ'ունի :
- Ես ալ չ'ունիմ, աղկից ի՞նչ կ'ելնէ . թուղթ, վկայագիր պէտք է :
- Այդ չի կայ . բնաւ և ո՛չ մէկ թուղթ մը :

— Այսու հանդերձ ձեզի հաճելի ըլլալու համար ամէն ձեռքէս եկածը պիտի ընեմ . բայց չ'եմ տեսներ ստուգիւ միջոց մը՝ որով կարենամ զինուրագրել մարդ մը, որ ո՛չ ազգութիւն ունի, ո՛չ տարիք, ո՛չ ալ անուն : Զեր մարդը բնաւ բան մը չ'ունի :

Հարցուքնիչ դատաւորը տեսաւ որ այս կերպով ալ այս գործս լուծում չ'ունէր, հետեւարար հարկադրեցաւ Նիքօլա Տիւրօրը դրկել ուստիկանութեան ատեանը : Բայց սխալ ընթացք մը բռնած չ'ըլլալու համար, եւ զգալով բարեսրտութեան բնական զգացում մը այսպիսի մարդու մը համար որ հեզ եւ անվաս կ'երեւէր, թափառականութեան յանցանքանըն ալ մէկ կողմ դրաւ, պատ-

ճառելով թէ ամբաստանելոյն անբնակարան եւ անապրուստ ըլլալն ալ հաստատուած չ'էր . և մի միայն անպարկեշտութեան յանցանքը մնաց :

Պարօն տ' Արքիլ շռւնչ առաւ այս որոշումն լսելով, եւ մինչեւ դատագարտուելու ժամանակ կրցաւ խաղաղութեամբ վայելել առանձնութեան քաղցրութիւնները :

Արթիւր Յօմիէի երթալէն ի վեր՝ որն որ բանտէն հանուած էր դատաստանի ենթարկուելու համար եւ որ այլ եւս չ'էր երեւցած, առանձին խուցի մը մէջ փակուած էր, եւ անպիտան մարդոց մերձաւօրութենէն ազուտած՝ երկար օրեր կ'անցքնէր առողջ բան մը ընելու, եւ վայելելով իւր մըտաց ազուտութիւնը՝ զոր կը թողուր իւրեան իւր մարմնաւոր գերօւթիւնը :

Երկար ատեն ս սստիկ գրգռութեան մը մէջ ապրած ըլլալով, այժմ հեշտարար հանդարտութիւն մը կ'զգար զինքը միայնակ տեսնելով, ամրապէս եւ հաստատապէս պաշտպանեալ երկաթեայ վանդակներով, թանձր որմերով եւ անհամար նիգերով այն հալածման դէմ՝ զոր կրել տուած էր իւրեան իւր անզուգական կնոջ երկնային կատարելութիւնը : Այսուհետեւ իրեն համար ուշագրութիւն եւ խնամ ընծայող չը կար . եւ մէկը չը կար որ իւր դիմաց վրայ լրտե-

սէր իւր զգացմանց բացատրութիւնը՝ ան-  
միջապէս զայն կատարելու համար : Ալ այ-  
նուհետեւ ո՛չ պատրաստ սեղան կը գտնէր,  
ո՛չ պատրաստ անկողին, ո՛չ խաղաղութեան  
եւ երջանկութեան մժնողորտ մը, ո՛չ անաշ-  
բատ կեանքի մը տեսարանը, եւ ո՛չ ալ ա-  
մենայն առաքինութեանց օրինակը :

Ալ այնուհետեւ պարտաւորեալ չ'էր իւր  
ամէն տեսածին հաւանութիւն տալու, զոր  
կ'ընէր ըստ հարկի եւ յակամայից : Կրնար  
տրտնջալ, եւ իրաւունք եւ առիթ ունէր  
տրտնջալու այժմ :

Մանաւանդ երբ խաղաղ զիշերէ մը  
վերջը առաւօտուն աչքերը կր բանար, ճեր-  
մակ պատեր եւ փոփոխական երկնից մէկ  
անկիւնը կը տեսնէր, փոխանակ այն ան-  
փոփոխ դիմաց՝ որ կը ներկայէր իւր ա-  
շաց պարտուց կատարում, խաղաղական  
կեանք եւ ամենայն բարի բնոզդմանց լը-  
րումը :

Երբեմն երբեմն կը թողւր իւր այս  
քաղցր խորհուրդները, մտածելու համար թէ  
ի'նչ պիտի ընէր այն օրը, երբ բանտէն  
դուրս արձակէին զինքը: Գիտէր որ այն ա-  
տեն իրեն համար պիտի սկսէին կենաց  
դժուարութիւնը . վասն զի շատ պարկեշտ  
եւ բարի մարդ մ' ըլլալով՝ չ'էր ուզեր շա-  
րունակ բեռ ըլլալ ընկերութեան :

Իւր տունը թողելէն ի վեր գթութեան  
ընորհնւ ըրած էր իւր առաջին ճաշը, եւ  
սուացած էր 87 ֆրանք և 50 սանթիմը որով  
կր յուսար ապրիլ իւր ազատութեան առա-  
ջին օւերը . մասնաւոր բարերարի մը ընոր-  
հիւ ընդունած էր իւր առաջին հանդերձ-  
ները . եւ բարեգործ ական ընկերութիւն  
մը հայժմայթած էր իւրեան այժմ հագած  
զգ եսաները : Վերջապէս այս վայրկենիս  
կ'ապրէր ծախսիւք նպաստողաց :

Այս ա'յսպէս չ'էր կրնար տեւել միշտ և  
հանապազ . իւր մտքէն չ'էր անցըներ բնաւ  
նորէն բանտ մտնել իրրեւ անուզզայ ոճ-  
րագործ մը, ո՛չ ալ ձեռք կարկառել ան-  
ցորդաց՝ իրրեւ անկար թշրւառական մը :  
Կ'ուզէր իւր ապրուստն իւր աշխատութեամբ  
ինքը վաստիիլ . եւ զիտէր որ այս ալ զիւ-  
րին բան մը չ'էր . սակայն ամէն բան աչքն  
առած էր, որ զէս զի նորէն չը կրէ իւր շրջ-  
թայն : Առանց ստակի ձգել եւթալը հեռա-  
տեսութեան պակասութիւն չ'էր . հաշուեր  
էր որ, որովհետեւ խուզարկութիւններն ի  
դերեւ հանելու համար բոլոր ունեցածը  
ձեռքէ հանելու աստիճան յանձնառու ե-  
ղած էր, հետեւաղէս վրան ո՛չ ոսկի կրնար  
պահել եւ ո՛չ ալ պահնէն :

Չէր կրցած նաեւ վարկ մը բանալ տալ  
իրեն սեղանաւորի մը . վասն մի առաջին

անգամ որ ներկայանար սեղանաւորին դրամ առնելու համար, հո՛ն դռնակին ետին նորէն պիտի գտնէր իւր կինը, Հետեւապէս աշխատութեամբ պարտ էր հայթ աթել իւր ապրուսափ միջոցները :

Սակայն ի՞նչ տեսակ աշխատութեամբ։ Դեռ չէր գտած այս խնդրոյս լուծումը, երբ ոստիկանութեան գտատարանին առջեւ երեւալու կոչուեցաւ, պատասխանելու համար ա՛յն անկանոն վարժունքին նկատմամբ՝ որով յանցաւոր եղած էր։

Պ. տ'Արքիլ ներկայանալով ի գտաւրան, թէպէտ եւ իւր օրոշումն անդ առնալի էր, սակայն թեթեւ որտոշարժութիւն մը զգաց ։ իւր յանցանաց որովիսութիւնը լուելով՝ բոլոր ներկայ եղողները դարձան երեսը նայեցան։ և եղած քննութեան հետաքրրքական եւ երգիծարանական եղանակէն հասկցաւ թէ հաստրակոթիւնը կսպասէր այն դատերէն մէկուն՝ զորս ա՛յնչափ կը սիրեն, երիտասարդ փաստաբանը եւ ծերունի դրամատէրը։

Չէր ախորժեր ենթակայ ըլլալ լրագրոց տալիք զայթական լուրերուն, հետեւապէս միտքը դրաւ ինքինք պաշտպանել։ Բայց այս որոշումս փայլա՛ի նման եկաւ անցաւ։ մարդկային յարգանաց թէ լսդրութիւնները մէկ կողմ դնելով նորէն ձեռք ա-

ուաւ իւր կանխաւ բռնած ընթացքը, որոշելով ո՛չ վրիպիլ իւր երկրին դատական սովորութեանց պարտական եղած յարգանքէն, ո՛չ ալ իւր շահուն պահանջած լուռեթենէն։

— Միթէ դարձեալ, հարցուց իրեն նախագահը, չէ՞ք ուզեր ձեր ո՛վ ըլլալն ըսել։

— Ո՛չ, պարոն նախագահ։

— Անհաւատալի է արդարեւ որ ձեր կարգէն մարդ մը կարենայ մոռնալ վայել-չութեան օրէնքները։ Մարդ չը կրնար հասկընալթէ ի՞նչ կրնայ ըլլալ ա՛յդպիսի գործի մը շարժառիթը։ Զեր գերդաստանին մէջ խենդեր եղած էն։

— Չեմ գիտեր։

— Ապոէնթ կը խմէ՞ք։

— Երկու երեք անգամ խմած եմ։

— Ի՞նչ եղաւ ուրեմն ձեր նպատակը։

— Ես յոգնած էի կեանքէ։ Բայց չ'ուզեցի անձնասպան ըլլալ, վասն զի լուծում մը չ'է այս բանս։ հետեւապէս ուզեցի նոր կեանք մը սկսիլ թողլով հին կեանքս։ Կ'ուզեմ զիտնալ թէ արդ եօք պիտի կրնա՞մ յաջողիլ առանց պարտական մնալու ո՛չ իմ ծնողաց, ո՛չ իմ ազգականաց կամ բարեկամաց եւ ո՛չ ալ իմ ծանօթից։ Հետեւապէս որոշած եմ արհամարհել ապրելու դժուարութիւնները մէկ կողմ դնելով նորէն ձեռք ա-

Նիւթի, առանց բարոյականի, Եթէ ըսելու ըլլամ անունս, իմ ո՛վ ըլլալս պիտի յայտնուի. այն ատեն կրնայ դտնուիլ մէկը՝ որ կարեկցելով ինձ զիս պահանջէ. եւ փորձառութիւնը չը կրնար ըլլալ յայնժամ կատարեալ պայմանաց մէջ.

Իսկ գալով իմ զգեստուցս, ես զանո՞ք ոչնչացուցի, որպէս զի կարենամ րսել թէ ես աշխարհ եկոյ բան մը չ'ունենալով։ Կարելի է որ ես իմ այս փորձիս մէջ անյաջող ելնեմ. բայց մէկ անգամ փորձած կ'ըլլամ գոնէ։ Եթէ յաջողելու ըլլամ, պիտի բերկրիմ մտածելով որ մերկ եւ միայնակ ըլլալով աշխարհի վրայ, ապրելու միջոց մը դտայ, գուցէ բարձրանալով մինչ յակախութիւն եւ ի հարստութիւն։

— Բայց ներեցէք ինձ ըսել ձեզ թէ ձեր փորձառութիւնը շատ գէշ կ'սկսի։ Դուք դեռ նոր կը գտնուէիր Սէնի եզերը, որ հասարակաց գթութիւնը ձեզի ուտեստներ հայթայթեց։ այնուհետեւ զգեստ հագցուցին ձեզի եւ ծրի բնակարան մը տուին, այնպէս որ դուք այժմէն տէր էք դրամագիսի մը՝ զոր ո՛չ զօրութեամբ շահած էք և ո՛չ ալ ճարտարութեամբ։ Թէ որ հասկնալ կ'ուզէիր իրօք թէ ի՞նչ բանի կարող էք, պէտք էր որ վայրենեաց երկիր մը երթայիք։ Ասկից զատ դուք կենաց մէջ չը պիտի

մտնէք կատարեալ դիրքով մը։ վասն զի բանտէն դուրս ելած ատեննիդ, իբրեւ առաջին դրամ պիտի ունենաք դատական թղթեր։

— Ճշդիւ պարագայից այս մրցումն է որ կը հաստատէ հաւասարակշռութիւնը։ Եթէ ընկերութեան պարտիմ այն առաջին օգնութիւններն որով օդանացայ, նմա պարտիմ նաեւ իմ գոյութեանս առաջին դըժուարութիւնը։ Վայրենեաց երկրի մը մէջ մարդ չը պիտի օգնէր ինձ արդարեւ, բայց դատապարտող ալ չը պիտի ըլլար։ Եւ որովհետեւ ես իմ փորձս կ'ընեմ քաղաքակըրթեալ ընկերութեան մը մէջ, հետեւապէս անոր շահն ու վնասը միանգամայն կ'ընդունիմ։

— Սակայն ուրիշ առարկութիւն մը կայ զոր չ'էք մտածած։ ի՞նչ որ ալ ըրեր էք ու չընչացնելու համար ձեր ունեցած անձնական բաները, դուք չ'էք կրցած մերկանալ այն ժառանգական յատկութիւնները՝ զորս պարտիք ձեր ծնողաց, ո՛չ ձեր ստացած դաստիարակութիւնը, ո՛չ ալ այն կարգ մը զաղափարներն ու եղանակները, որ ձեզի առանձնաշնորհութիւն մը կուտան բազմաթիւ մարդոց վրայ։

— Ես կ'ըսեմ թէ ձեր այդ ըսածները շատ նուազ արժէք ունին, իմ ունենալիք

դժուարութեանցս համար : Սակայն գուցէ ասոնք փոխարինուին աշխատութեան սովորութեան պակասութեամբ , գործնական իրաց անփորձութեամբ եւ ուղեղային մշակութեան մը ներած զղային տկարութեամբ : —Եթէ միայն այսչափ է ըսելիքնիդ , կըրնաք նատիլ :

Նախագահը քանի մը խօսք ըրաւ իւր ընկերաց հետ եւ ըսաւ .

— Վճիռն ութն օրէն պիտի տրուի :

Այս յետաձգութիւնն անհանգիստ ըրաւ պարոն տ' Արվիլն , որ վախցաւ շատ խօսած ըլլալու եւ յանգէտս վտանգաւոր տեղեկութիւններ տալուն համար : Սակայն այնպիսի բան մը չը կար : Հետեւեալ շաբթուն ամբաստանեալը նորէն դատարան բերուցաւ , որպէս զի լսէ իւր վճիռը՝ որ այսպէս խմբագրեալ էր .

« Դատարանը ,

« Նկատելով որ հաստատուած եղելութիւն մի է որ ամբաստանեալը Սէնի մէկ եզրին վրայ գտնուած է կատարեալ մերկութեան վիճակի մէջ . թէ լաւ մը լուսցած ժամանակ այս հասարակութեան առջև բաց տեղւոյս վրայ բազմաթիւ մարդիկ կրցան տեսնել եւ տեսան այս տեսարանս . թէ հետեւաբար տմբաստանութեան առարկայ եղող գործը անպարկեշտութեան ամէն պայ-

մանները կը բովանդակէ յինքեան .

« Նկատելով որ պատժական օրինաց 330րդ յօդուածն այսպէս խմբագրգալ է թէ . Ով որ անպարկեշտութեան գործ մը գործելու ըլլայ , երեք ամիսէն մինչեւ մէկ տարի բանտարկութեամբ եւ տասն եւ վեց ֆրանքէն մինչեւ երկու հարիւր ֆրանքի տուգանքով կը պատժուի .

« Բայց նկատելով որ դիտաւորութիւնն եղեռնական գործին մէկ անհրաժեշտ տարրն է , թէ առանց դիտաւորութեան եղեռն չը կայ , եւ թէ այս գործիս մէջ ըստ արձանագրութեան պաշտօնէից , ըստ վկայութեան վկայից եւ ըստ բացատրութեանց՝ գորս ամբաստանեալը տուաւ դատարանին , այս մարդս բնաւ դիտաւորութիւն չ'ունէր հրապարակային անպարկեշտութիւն մը գործելու .

« Նկատելով որ իրեն վերագրեալ գործը մտաւորական շփոթութեան մը արդիւնքն է , թէ վարչական իշխանութեան անկ է արգելու քաղաքին բարեկարգութեան հակառակ եղող այսպիսի գործերը , սակայն դատարանը չը կրնալով պատիժ մը տնօրինել այնպիսի մէկու մը՝ որ իւր գաղափարաց շփոթութեամբ ազատ է ամէն պատասխանատութենէ .

« Ողաւ կը թողու ամբաստանեալը : »

52

Պարոն տ'Արվիլ արդարացած էր . սաւկայն նա չէր թողած դեռ իւր զարմացումը , երբ իւր արձանագրութեան ջնջումէն վերջը դուրս ելած ատեն , յանձնուեցաւ պաշտօնէից ձեռքն որոց գործն էր տանիլ զանի յիմարանոց :

---

Ե .

Շատ սիրուն ապաստանարան մ'էր այս տեղս : Պարոն տ'Արվիլ գեղեցիկ պարտէզի մը հովանեաց տակ , եւ հանդարտութիւն եւ զրվութիւն ազդող ընդարձակ բակերուն մէջ ձեմելով , կը տեսնէր որ կեանքը գէշ բան մը չէ :

Ուրախ կ'ըլլօր տեսնելով որ երջանկութիւնը տեսակ մը կատաղութեամբ կը հալածէր զինքն այն օրէն ի վեր՝ որ թողուցեր էր իւր կինը : Այս կերպով ճակատագիրը փոխարինութիւն մը կ'ընէր իւրեան , բայց ինք աւելի դժուարութեանց կ'սպասէր . կարծեր էր որ անօթութենէ , դատաւորաց խստութենէն եւ բանտապահաց վայրագութենէն շատ նեղութիւն ալիսի կրէ , իսկ ընդ հակառակն ամէն տեղ խնամք եւ համակրութիւն գտած էր :

Մարդիկ իրնային իրեն հետ վարուիլ

իրրեւ ընդ մուրացիկ . սակայն չէին ուզած այդպէս . հալածել զինքն իրրեւ թափառական մարդ , սակայն մէկ կողմ դրած էին իրենց այդ խորհուրդը . պատուհասել զինքն անպատճութեամբ եւ պատժով , սակայն վերջապէս անպարտ արձակեր էին զինքը :

Նա՝ ո'րչափ որ լուսութիւն պահէր էր և չէր ուզած ինքինք ճանչցնել , սակայն դարձեալ իւր հետը վարուած էին ակնածութեամբ որպէս թէ ծանօթ մէկն եղած ըլլար . եւ մտածեր էին իրենք իրենց թէ արդարեւ կարելի չէ՞ որ մարդս աշխարհի մէջ ունեցած դիրքը փոխէ , եւ թէ տեսակ մը անհրաժեշտութիւն կայ երջանկութեան մէջ ինչպէս ի թշուառութեան :

Հետեւապէս պարոն տ'Արվիլ մտաւորական ամեննրջանիկ արամագրութեան մը մէջ ներկայացաւ իւր մտաց վիճակը ըննելու պաշտօնն ունեցող բժշկին առջեւ :

— Տեսնենք , պա՛րոն , ըսաւ բժիշկը . բացարեցէք ինձ թէ ի՞նչ կ'զգաք :

— Ես յիմար եմ , պարոն բժիշկ :

— Յիմա՛ր մի , աղաղակեց բժիշկն ապշութեամբ . առաջին անգամն է որ այս ապաստանարանիս մէջ եղող մէկու մը բերնէն կը լսեմ այս խօսքս : Յիմար ըլլանիդ ի՞նչպէս զիտէք :

— Եթէ յիմար եղած չըլլայի, զիս հոս չէին խրկեր :

— Բայց կրնայ ըլլայ որ սխալած ըլլան, Վարչութիւնը խրկած է զձեզ հոս . բայց բժշկականութիւնը դեռ իւր վճիռը տըռուած չէ :

— Երբ իմ պատմութիւնս ընելու ըլլամ վարանմունք կը փարատին : Ես աղնուական եւ հարուստ էի, ամէնուն յարգանքը եւ իմ մերձաւորաց սէրը կը փայելէի . կին մը ունէի որ օրինակ է ամենայն առաքինութեանց եւ որուն միակ գործն ու զբաղումն է բարեգործութիւն ընել : Ահա այս կատարելութեան տանջանքէն աղատելու նպատակաւ էր միայն որ կենաց ամէն քաղցրութիւնները մերժեցի : Ասկից աւելի խենդ եւ յիմար կրնայ ըլլալ մարդ :

— Այս ըսածդ պատճառներէ կախում ունի : Արդարեւ սոսկալի գրգռութիւն մը զգալու է մարդ ապրելով այնպիսի անձի մը հետ՝ որ իւր մասնաւոր կեանքը չ'ունի, որովհետեւ իւր բոլոր գործերը կ'ենթարկէ ուրիշներուն կարծեաց : Այսպիսի անօգուտ վարմունք մը տեսակ մը պարսաւ է այլոց, եւ ես կը հասկնամ թէ դուք չ'եք կրցած հանդուրժել այս հալածման :

— Այս՝ Բայց գիտէ՞ք արգեօք թէ ի՞նչպէս ըրի այս հալածումէս աղատելու համար :

— Գիտեմ: Ուրիշ միջոց չը կար :

— Հիմակ ինձի խենդ է չը՝ պիտի ըսէք :

— Զէ՛, կրնաք խենդ ըլլալ . բայց տեսնելու եմ. ձեր ըսածն եւ ձեր ըրածը շատ բանաւոր կ'երեւի ինձ . բայց յիմարաց հետքաւական գործ ըրած ըլլալով, անանկ երեւոյթներէ չ'եմ խարուիր : Հասարակութիւնը չը կրնար երեւակայել թէ խենդերը ո՛ր աստիճան խորամանկ են . ճշմարտապէս հրաշալի հաստատամութիւն մը ցոյց կուտան ամենախելացի կերպով պատասխանելու համար իրենց ուղեալ հարցումներուն : Ես դեռ չը պատահեցայ այնպիսի խենդի մը՝ որ ինքզինքը իրեւ յիմար ցուցնելու գաղափարն ունենայ, հետազոտութիւններն ի դերեւ հանելու համար :

— Թո՞ղ այդպէս ըլլայ: Բայց եթէ մարդ գիկ համոզուելու ըլլան թէ ես ողջամիտ մէկն եմ:

— Տեսնենք: Ամէն ուղողը խենդ չ'ըլլար :

Եւ այն օրէն սկսեալ բժիշկը ձեռք առաւ այնպիսի միջոց մը, որով ընդհանրապէս լաւագոյն արդիւնքներ կ'ստացուիր :

Պ. տ'Արվիլ պաղ ջրով լուացուելու ենթարկուեցաւ : Պ. տ'Արվիլ բանտին մէջ անցուցած երկար շաբաթներու միջոցին ջրոյ հետ նուազ եւ անկատար յարաքերութիւն-

Ներ ունեցած էր . հետեւապէս ուրախութեամբ սկսաւ այն մեծ լուացումները՝ ուսուկից զրկուած էր երկար ատենէ ի վեր + Ո՛չ թէ միայն պաղ ջրով լուացուելէ չ'էր խորշեր , այլ եւ հաճոյք կ'զդար զայն երկարաձգելով : Այս դրութիւնս քանի մ'օր շարունակունցաւ և Պ. տ'Արվիլ չնորհակալութիւն կը յայտնէր այս մասին : Օր մը որ լուացումը մոռցուեր էր ,

— Ո՞ւր է լուացումն , ըսաւ :

Գացին շուտ մը իմաց տուին բժշկին որ յիմարին մէկը պաղ ջրով լուացուիլ կ'ուզէր :

— Այդ մարդը խենդ չ'է , ըսաւ բըժիշկը :

Յետոյ գնաց գտաւ Պ. տ'Արվիլը եւ ջանաց տրամաբանել անոր հետ . սակայն խօսակցութիւնն իսկոյն նուաղեցաւ . վասն զի երբ յիմար մը կ'ուզէ ապացուցանել թէ ինքն ողջամիտ է , պարապ բան է անոր հակառակախօսիլ . եւ երբ մէկը ինքզինքին համար ես խենդ եմ կ'ըսէք , անոր պատասխանել չ'ըլլար : Վերջապէս բժշկին համբերութիւնը հատաւ և ձգեց գնաց ըսելով .

— Պա՛րոն , քա՛նի մը օրէն կը տեսնը-ուինք :

Սրդարեւ քանի մը օր վերջը , Պ. տ'Արվիլ կոչուեցաւ անօրէնին սենեակը , եւ նա իրեն յանձնելով իւր 87 ֆր. 50 սանթիմը ,

մէկը զրաւ հետը՝ որ մինչեւ յիմարանոցին դուռը տանելով ազատ թողու զինքը : Հետեւաբար Պ. տ'Արվիլ ազատ էր այնուհետեւ : Բայց ի՞նչ պիտի ընէր իւր ազատութեամբ :

Պայծառ էր երկինք . քաղցրաշունչ հովմը փշելով ծաղկեալ պարտիզաց մէջէն կուգար բարեխառնելու ամառուան հեշտաբար օրուան մը տաքութիւնը : Այնպէս կը թըւէր թէ բնութեան մէջ ամէն բան հանգըստեան եւ բարօրութեան մէջ էր : Պ. տ'Արվիլ զգալով գեղեցիկ օդին առթած բարեկեցութեան տպաւորութիւնը , ըսաւ ինքնիբեն թէ դեռ մտածելու ժամանակ ունէր : Իւր գրպանին մէջ ունենալով 87 ֆրանք 50 սանդիմ , իւր ընելիք լաւագոյն բանն էր Փարիզ գառնալ եւ երթալ նախաճաշ մընել : Ճշդիւ դոնէն քիչ մը հեռուն կառք մը կեցած էր :

— Կա՛ռավար , ազա՞տ ես :

Այս միջոցիս կառքին դռնակը բացուեցաւ , եւ կին մը իջաւ վար ցատկելով .

— Սօ՛սթէն , ազազակեց կինը Պ. տ'Արվիլի վիզը փաթթուելով :

Իւր կինն էր այս : Մացուց զանի կառքին մէջ՝ որն որ բանեց Փարիզու ճանքան . կինը իրեն ըսաւ .

— Կը ներեմ քեզի : Այս ըրածդդ շատ

գէշ բան էր . բայց ես չ'եմ մոռցած թէ  
մենք միացեալ ենք միմեանց մինչ ի մահ :  
Այր եւ կին պարտին ամէն պակասութիւն  
եւ անիրաւութիւն մոռնալ, բան թէ խան-  
դարել տան մէջ տիրելիք ներդաշնակու-  
թիւնը : Հոգ մ'ըներ . քեզի յանդիմանելու  
չ'եմ . նորէն սկսինք ապրիլ միատեղ ա'յն-  
պէս, որպէս թէ այսպիսի բան մը պատա-  
հած Շըլլար : Դու ալ ինձ պիտի ներես իմ  
ունեցած պակասութեանցս, վասն զի հար-  
կաւ պակասութիւն մ' ունէի որ ձգեցիր  
գացիր : Պիտի ջանամ ուղղել զինքս և բնաւ  
երբէք չը հակառակիլ քեզի : Եթէ բացար-  
ձակապէս կատարեալ կին մը չ'եմ, ա'յդ ալ  
իմ պակասութիւնս չ'է . բայց պիտի ջանամ  
կատարեալ ըլլալու : Այս եղելութեանց մէջ  
վնաս մը չը կայ . եւ ես ա'յնպէս կարգա-  
դրած եմ ամէն բան, որ դու տուն վերա-  
դառնաս առանց մէկու մը բացատրութիւն  
տալու : Ծնողքս քու բայցակայութեանդ վը-  
րայ խօսելիք մը չ'ունին քեզի, իսկ մեր բա-  
րեկամները բնաւ տեղեկութիւն մը չ'ունին  
այս եղելութիւններէն : Ես միայն ինձ պա-  
հեցի ամէն ախրութիւն եւ ամէն անհան-  
գըտութիւն : Վասն զի գիտցէք որ շատ  
անհանգիստ եղայ : Կը վախնայի որ թշուա-  
ռութիւն մը չը պատահի քեզի . եւ ա'յնչափ  
տխուր էի եւ վշտացեալ, որ չ'եմ գիտեր

ի'նչ պիտի ըլլայի եթէ այս գործս աւելի  
երկար ատեն տեւելու ըլլար : Օր մը Ար-  
թուր հօմիէ անուն մէկն եկաւ, ըստ ինձ  
թէ յանիրաւի հալածուելով քեզի հետ բան-  
տարկուեր, թէ բարեբաղդարար իւր ան-  
մեղութիւնը ճանչցուեր եւ թէ իւր ազա-  
տութենէն վերջը իւր առաջին գործն եղած  
էր լուր բերել ինձ քու վրայօքդ : Միայն ե-  
րեք հազար Փրանք կ'ուղէր քու ո'ւր ըլլալդ  
ինձ ըսելու համար : Երկու հազար Փրանք  
տուի . պարապ բան է ըստ . վերջապէս  
երկու հազար հինգ հարիւր Փրանքի իրա-  
ւախոհ եղանք : Ո՛հ, ո'քափ երջանիկ եմ  
նորէն տեսնելով զեեզ : Իսկ դո՞ւ :

— Ե՛ս ալ այնպէս, պատասխանեց Պ.  
տ'Արվիլ :

Բազդին այս վերջին հարուածէն բոլորո-  
վին յաղթուեր էր . ա'յլ եւս դիմադրելու  
զօրութիւն չ'էր մնացեր վրան : Ելաւ Պօրտո  
գնաց եւ գլուխ խոնարհեցուց ճակատա-  
գրին զօրութեան առջեւ : Իսկ իւր 87 Փը-  
րանք եւ 50 սանթիմը պարտաւորեցաւ աղ-  
քատաց տալու . ընկերութիւնն այնպիսի  
լաւ կերպով կազմուած էր որ իւր բոլոր բա-  
ցակայութեան ժամանակ այս գրամէն բան  
մը չ'էր կրցած ծախսել :

Ասկից ժամանակ մը վերջը Արթուր Բո-

միէի պատահեցաւ Փարիզ ճանապարհորդած  
միջոցին :

Այս սուտ բարեկամս կը ջանար խուսիլ :  
Պ. ա' Արվիլ դէմն ելաւ եւ ըսաւ .

— Զիս մատնելուդ համար նեղացած  
չեմ ձեզի . վասն զի եթէ այդպէս չըլլար ,  
ուրիշ կերպ պլոտի ըլլար : Կը տեսնէ՞ք , «ի'-  
րելի պարոն , երբ մարդս երջանիկ կը ծնի ,  
բան մը չը կրնար ընել . կարելի չէ որ եր-  
ջանիկ չըլլայ :



21661

21662

21663

2013

